ՀՀ Արմավիրի մարզի <<Արգինայի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. <<Հանրակրթության մասին >> օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով ,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը /բնօրինակի հետ/.
3. Հաստատության ղեկավարման իրավունքի / հավաստագրի/ պատճենը /բնօրինակի հետ/.
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը / որը հավակնորդը կարող է ներկայացվել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը/ /այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով/ , որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում , ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին.
5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թվականի սեպտեմբերի 2-ից սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Արգինայի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Արգինայի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արգինա , Մաշտոցի փողոց 1 շենք:

Տեղեկությունների համար դիմել հեռախոս՝ 093-62-51-60 , է փոստ՝ arginayimijn@mail.ru: